

Հաստատված է

ԳՊՀ գիտական խորհրդի 2007թ.

հոկտեմբերի 15-ի թիվ 1 նիստում

Ռեկտոր Ռ. Խ. Հակոբյան

«15» հոկտեմբերի 2007թ.



**ԿԱՆՈՆԱԿԱՐԳ**  
**ԳՎՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ**  
**ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ**

**I. ԸՆդհանուր դրույթներ.**

1. Ակադեմիական քաղաքականության վարչությունը (այսուհետ՝ ԱՔՎ) հանդիսանում է Գավառի պետական համալսարանի (այսուհետ՝ ԳՊՀ) ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանում, որը գործում է ԳՊՀ կանոնադրության և սույն կանոնադրության հիման վրա:
2. ԱՔՎ-ն կարող է վերակազմակերպվել կամ լուծարվել ԳՊՀ գիտական խորհրդի որոշմամբ՝ ԳՊՀ ռեկտորի հրամանով:
3. Սույն կանոնակարգը կարող է լրացվել կամ փոփոխվել ԳՊՀ գիտական խորհրդի որոշմամբ:

**II. ԳՊՀ ԱՔՎ ԽՆդիրներն ու գործառույթները**

4. ԱՔՎ-ն իրականացնում է հետևյալ խնդիրները.
  - 1) բակալավրիատում և մագիստրատուրայում ուսումնական գործընթացի ծրագրում, կազմակերպում և վերահսկում,
  - 2) ուսումնական գործընթացի որակի վերահսկման կազմակերպում,
  - 3) ուսումնական գործընթացին մասնակցող ԳՊՀ կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքների համակարգում,
  - 4) ուսանողական կազմակերպությունների աշխատանքի համակարգում:
5. ԱՔՎ-ն իրականացնում է հետևյալ գործառույթները.
  - 1) բակալավրիատի և մագիստրատուրայի ուսումնական պլանների ու առարկայական ծրագրերի մշակման գործընթացի կազմակերպում և կատարման վերահսկում,
  - 2) ամբիոնային ծանրաբեռնվածությունների ստուգում և կատարման վերահսկում,
  - 3) ժամավճարային հիմունքներով աշխատողների ձևակերպման ներկայացում,
  - 4) բակալավրիատի և մագիստրատուրայի դասատախտակների ստուգում և ուսումնական գործընթացը լսարանային ֆոնդով ապահովում,
  - 5) ուսումնական գործընթացի ժամանակացույցի և դասատախտակների օպտիմալացում,
  - 6) դասերի կայացման վերահսկում,
  - 7) ֆակուլտետային ուսումնամեթոդական խորհուրդների աշխատանքների համակարգում,
  - 8) ուսանողների ավարտական փաստաթղթերի նախապատրաստում և հաշվառում,
  - 9) ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների աշխատանքների կազմակերպում,
  - 10) ընթացիկ, միջանկյալ և հանրագումարային քննությունների անցկացման վերահսկում,
  - 11) ուսումնական գործընթացի փաստաթղթային գործավարության ապահովում և վերահսկում,
  - 12) ուսումնական, մանկավարժական, նախավարտական և հետազոտական պրակտիկաների կազմակերպում և վերահսկում,
  - 13) մ. կ. ծրագրերի բարելավման վերաբերյալ առաջարկությունների մշակում,
  - 14) մագիստրատուրայի ընդունելության կազմակերպում,
  - 15) երկրորդ մասնագիտության գծով ընդունելության կազմակերպում,

- 16) դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումների կազմակերպում,
- 17) ուսանողների մնացորդային գիտելիքների ստուգման կազմակերպում,
- 18) ուսանողների շարժի հետ կապված (ընդունելության, հեռացման, ուսանողական իրավունքների վերականգման, տեղափոխության, տարկետման և այլն) հրամանների նախագծերի նախապատրաստում և հաշվառում,
- 19) ուսանողների ուսման վարձի զեղչման գործընթացի կազմակերպում,
- 20) վճարովի կրթական ծառայությունների կազմակերպում,
- 21) ԳՊՀ ընթացիկ և տարեկան հաշվետվությունների նախապատրաստում,
- 22) Կրթության և գիտության նախարարության համար ուսումնական գործընթացին վերաբերող տեղեկատվական-վիճակագրական տվյալների նախապատրաստում,
- 23) ուսանողների տվյալների բազայի ստեղծում և պահպանում,
- 24) այլ գործառույթների իրականացում:

### III. ԱԲՎ կառուցվածքը և կառավարումը.

6. ԱԲՎ-ն անմիջականորեն ենթարկվում է ԳՊՀ ղեկավարին և ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտորին:
7. ԱԲՎ-ն կազմված է բակալավրիատի, մագիստրատուրայի և որակի ապահովման բաժիններից: ԱԲՎ-ի հաստիքացուցակը հաստատում է ԳՊՀ ղեկավարը:
8. ԱԲՎ-ն ղեկավարում է պետը, որին նշանակում և պաշտոնից ազատում է ղեկավարը: ԱԲՎ-ի պետի հետ ղեկավարը կնքում է աշխատանքային պայմանագիր, որը հիմք է հանդիսանում հրամանը ձևակերպելու համար: ԱԲՎ-ի պետը, ի պաշտոնե, ԳՊՀ գիտական խորհրդի և ղեկավարատի անդամ է:
9. ԱԲՎ-ի պետն իրականացնում է հետևյալ գործառույթները`
  - 1) ԱԲՎ-ի կառուցվածքային ստորաբաժանումների անմիջական ղեկավարում,
  - 2) գիտական խորհրդում և ղեկավարատում ուսումնական գործընթացին վերաբերող հարցերի նախապատրաստում և ներկայացում,
  - 3) ուսումնական գործընթացին վերաբերող ԳՊՀ կանոնակարգերի և ԳՊՀ ուսումնական աշխատանքների հաշվարկի նորմերի մշակում,
  - 4) ֆակուլտետների և ամբիոնների կողմից ուսումնական գործընթացների կազմակերպմանը վերաբերող ԳՊՀ հրամանների և նորմատիվ փաստաթղթերի կատարման վերահսկում,
  - 5) այլ գործառույթների իրականացում:
10. ԱԲՎ-ի պետը պատասխանատվություն է կրում ԱԲՎ-ի աշխատանքների որակի, ԱԲՎ-ի խնդիրների լուծման և գործառույթների պատշաճ կատարման համար: